– Ա՛յ իմ խատուտիկ հարսնուկ, քու սիրուն ես հոս իմ եկեր.
Պագ մի տուր տէրտի համար, դուն ալվի վատէդ մի՛ դառնար:
Ելլիմ ի ձիուս վըրայ, խառնըւիմ ի մէջ հովերուն,
Երթամ ի օտար երկիր, խարիպիդ տեղըն տի գըտնիմ,
Նըստիմ ու հարցմունք անիմ, ըսիմ որ ա՛լ չիկենայ,
Ելլիմ ըռահվան ձիուս, առնիմ խարիպդ ի էքսէս,
Խառնըւիմ ամպին մէջը, իջնիմ աս ջըրին վըրայ.
Խարիպըդ դուռըդ բերի, ա՛ռ նըստէ՛ անուշ խօրըթէ՛.
Քու եարըդ քեզի բերի հասուցի սըրտիդ մուրատին.
Խօսք տըւիր ու վատ արիր, դուն քու խօսքըդ կատարէ՛.
Քենէ հազար պագ կ’ուզիմ, անկէց ետեւ եառ արէ՛:
–Ես կուտամ հազար պագըս, չիմ մընար քեզի պարտական.
Ա՛յ իմ խահրըման կըյինճ, ես մինակ՝ դու ո՞ւր կու երթաս.
Դուն եղար գրանան արեւ, ցաթեցար աս ջըրին վըրայ.
Քու սիրուն տաքը զարկաւ, ես եղայ ձընիկ հալելու.
Նըստինք աս ջուրին վըրայ, խօսք ունիմ քեզի ըսելու:
Նըռան հատ գին ունիմ, անո՛ւշ լինի խըմողին:
–Դուն սիրէ՛ եարուդ նըման, ես ճուղապ կուտամ քու տիրուն:

* * * *

Ա՛յ իմ խատուտիկ հարսնուկ, ջըրեզերն ի՞նչ կու բանիս:
–Խարիպս է խարիպ երկիր, ես անոր ճամբան կու պահեմ:
–Հարսնո՛ւկ, եկուր պագ մի տո՛ւր, խարիպէդ խապրիկ մի կուտամ:
–Պագ մի չէ, երկուք կուտամ խարիպէս խապար բերողին.
Պագ կուտամ ու պագ կ’առնեմ, պէտ կուտամ մէկալ օրերուն:
– Հարսնո՛ւկ, ելի՛, վեր եկու, ես ի քու խարիպդ եմ եկեր:
–Աչուիդ խարիպիս աչուին, ձայնդ անոր ձայնը չի մանիր:
Ճէպէդ ու ծոցէդ կ’ուզեմ, տեսնեմ նո՞ւռ կուտաս թէ խընծոր:
Նուռ կայ հազար հատ ունի. հազրա պագն ալ ո՞ւր կու լընի:
– Երկու սէրն որ մէկ լընի, հազար պագն ալ թէզ կու լընի:
Եկո՛ւ նի՛ստ ձիուս ետին, որ լինենք ձի ու ձիաւոր:
(Եւ երկուքն ի միասին կ’երթան իրենց տան դուռը):
– Մարի՛կ, եկու դուռը բաց, քու խարիպ որդեկդ եմ եկեր:
– Գընա՛ աս գեղին վերեւ, հէլպէթ աս գեղն ալ խան ունի:
Պառկէ ’ւ անուշ քուն եղի, հէլպէթ աս մութը լոս ունի:
Մութն երթայ ու լոսը գայ, մարիկն իր որդեկը ճանչնայ:
(Մօրն այս պատասխանին վրայ՝ որդին եւ հարսը մեկին կ’երթան այլ երկիր):